

Կ-010-31.05.2017,11.09.2017-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի ՀՕ-221 օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Կատարողական գործողությունների կատարման ծախսերը փոխանցվում են դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդ, որում գոյացած միջոցներն օգտագործվում են կատարողական ծախսերի, հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման, համակարգի զարգացման եւ ծառայողների նյութական խրախուսման, ինչպես նաեւ սույն մասի 3-րդ պարբերությունում նշված դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի հատուցմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների վերականգնման համար:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման կարգը, ինչպես նաեւ ծախսման այլ ուղղությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցներից տրամադրված միջոցները վերականգնվում են հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասը հատուցելու մասին այն բոլոր ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 2014 թվականի հունիսի 1-ից հետո, ենթակա են կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի հաշվին:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի ՀՕ-221 օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Կատարողական գործողությունների կատարման ծախսերը փոխանցվում են դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդ, որում գոյացած միջոցներն օգտագործվում են կատարողական ծախսերի, հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման, համակարգի զարգացման եւ ծառայողների նյութական խրախուսման, ինչպես նաեւ սույն մասի 3-րդ պարբերությունում նշված դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի հատուցմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների վերականգնման համար, ~~ինչպես նաեւ ապահովելու համար վարչարարության հետեւանքով կայացված վարչական եւ դատական ակտերով սահմանված ֆիզիկական եւ իրավաբանական անձանց վճարումները:~~

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման կարգը, ~~ինչպես նաեւ ծախսման այլ ուղղությունները~~ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ տրամադրված միջոցները վերականգնվում են հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի հաշվին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասը հատուցելու մասին այն բոլոր ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 2014 թվականի հունիսի 1-ից հետո, ենթակա են կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի հաշվին:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-010-31.05.2017-ՊԻՄԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1 (1-ին պարբերություն)	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ» բառերով՝ նպատակ ունենալով դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում վնասի հատուցման հարցը լուծելիս չսահմանափակվել միայն ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներով և հնարավորություն ընձեռել վնասի հատուցումը իրականացնել ՀՀ պետական բյուջեի այլ միջոցներից, ինչպես նաև կիրառել «Հայաստանի Հանրապետության բյուջետային	Նախագիծը «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի» բառերից հետո լրացվել է «կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ» բառերով:	Ընդունվել է:

			համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված՝ դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց մինչև մեկ տարի ժամկետով փոխանցվող մուրհակ տրամադրելու հնարավորությունը: Կրկնություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք հանել «ինչպես նաև ապահովելու համար վարչարարության հետևանքով կայացված վարչական և դատական ակտերով սահմանված ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարումները» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչարարության հետևանքով կայացված վարչական և դատական ակտերով սահմանված ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարումները արդեն իսկ ներառված են Նախագծի կարգավորման առարկա հանդիսացող «վարչարարությամբ պատճառված վնաս» հասկացության մեջ:	Նախագծից հանվել են «ինչպես նաև ապահովելու համար վարչարարության հետևանքով կայացված վարչական և դատական ակտերով սահմանված ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարումները» բառերը:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1 (2-րդ պարբերություն)	Առաջարկում ենք «ֆոնդի միջոցների օգտագործման	Նախագիծը «ֆոնդի միջոցների օգտագործման կարգը» բառերից	Ընդունվել է:

			կարգը» բառերից հետո լրացնել «ինչպես նաև ծախսման այլ ուղղությունները» բառերով՝ նպատակ ունենալով ապահովել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսման ուղղությունների որոշման ճկունությունը: Հարկ է նկատել նաև, որ նույնաբովանդակ կանոնակարգում է սահմանված նաև «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին մասին» ՀՀ օրենքի 33 ¹ հոդվածի 3-րդ մասում:	հետո լրացվել է «ինչպես նաև ծախսման այլ ուղղությունները» բառերով:	
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 1 (3-րդ պարբերություն)	«Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի» և «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ» բառերով:	Փոփոխությունները կատարվել են՝ հաշվի առնելով սույն ամփոփաթերթի 1-ին կետում նշված տրամաբանությունը:	Ընդունվել է:
4.	ՀՀ ԱԺ պատգամավոր Մ.Պողոսյան	Հոդված 1 (1-ին պարբերություն)	Պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Կատարողական գործողությունների կատարման ծախսերը փոխանցվում են դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ, որում գոյացած միջոցներն	Առաջարկության վերաբերյալ կարծիք չի ձևավորվել, քանի որ հանձնաժողովի նիստին պատգամավորը ետ է վերցրել իր առաջարկությունը:	Առաջարկության վերաբերյալ կարծիք չի ձևավորվել, քանի որ հանձնաժողովի նիստին պատգամավորը ետ է վերցրել իր առաջարկությունը:

			օգտագործվում են <u>համակարգի զարգացման և</u> կատարողական ծախսերի, հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման, ծառայողների նյութական խրախուսման, սույն մասի 3-րդ պարբերությունում նշված դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցների վերականգնման համար, ինչպես նաև ապահովելու համար վարչարարության հետևանքով կայացված վարչական և դատական ակտերով սահմանված ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարումները: Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդում գոյացած միջոցների քառասուն տոկոսն օգտագործվում է համակարգի զարգացման և կատարողական ծախսերի, քառասուն տոկոսը՝ ծառայողների նյութական խրախուսման համար, քսան տոկոսը՝ հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով պատճառված վնասի		
--	--	--	--	--	--

			փոխհատուցման և վարչարարության հետևանքով կայացված վարչական և դատական ակտերով սահմանված ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարումներն ապահովելու»:		
--	--	--	--	--	--